ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Ք. ՉԱՐԵՆՑԱՎԱՆ
18.03.2022Թ.

Համայնքի ավագանու նիստի աշխատանքների ներկա են ավագանու 8 անդամները:

Բացակայում են Հ.Գրիգորյանը, Ն.Վարդանյանը, Ն.Բաբայանը, Մ.Գասպարյանը, Դավթյան Կարենը և Ա.Փանոսյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում են՝
Համայնքի համայնքի գլխավոր խորհրդական Վ. Չիլինգարյանը, աշխատակազմի քարտուղար Ս.Մուրադյանը, համայնքապետարանի աշխատակազմի բաժնի պետեր Վ.Բարսամյանը, Ա. Ծերունյանը, Ա.Զաքարյանը, Գ.Աֆյանը և գյուղերի վարչական ղեկավարները:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Ձեզ եմ ներկայացնում համայնքի ավագանու թիվ 3 հերթական նիստի օրակարգը՝

1. Չարենցավան համայնքի 2021 թվականի բյուջեի տարեկան եկամուտների և ծախսերի հաշվետվության մասին:
2. Չարենցավան համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 93-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
3. Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) հատվածից գումար հատկացնելու մասին:
4. Չարենցավան համայնքի ղեկավարի տարեկան հաշվետվությունը 2021 թվականի համայնքի տարեկան աշխատանքային պլանի իրականացման մասին:
5. Վոլոդյա Փինաչյանին և իր ընտանիքի անդամներին սեփականության իրավունքով պատկանող ք.Չարենցավան Այգեստան թաղամաս 1-ին փողոց 4-րդ փակուղի թիվ 7 հասցեում գտնվող ավել զբաղեցրած հողատարածքն ուղղակի վաճառքով օտարելու մասին:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Եթե առարկություններ չկան, քվեարկության եմ դնում որոշումը օրակարգային հարցի վերաբերյալ:

Կողմ -8 **դեմ - 0** **ձեռնպահ -0**

Օրակարգն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

1. Զարենցավան համայնքի 2021 թվականի բյուջեի տարեկան եկամուտների և ծախսերի հաշվետվության մասին:

/Զեկ. Գ.Աֆյան/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 83-րդ հոդվածի 2-րդ մասի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 5-րդ մասի,առաջարկում եմ. Հաստատել Զարենցավան համայնքի 2021 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի(ներկայացվում է):

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-8 **դեմ - 0** **ձեռնպահ -0**

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

2.Զարենցավան համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 93-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

/Զեկ. Գ.Աֆյան/

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթներով՝ ***առաջարկում եմ.*** Չարենցավան համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 20-ի «Չարենցավան համայնքի 2022 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 93-Ն որոշման մեջ կատարել ներկայացվող փոփոխությունները և լրացումները;

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-8 **դեմ - 0** **ձեռնպահ -0**

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

3. Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) հատվածից գումար հատկացնելու մասին:

/Զեկ. Գ.Աֆյան/

Հաշվի առնելով Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի 2-րդ թաղ., 2 շենքի 7 բն. բնակիչ ***Կոլյա Ալեքսանդրի Կոնջորյանի*** 2022 թվականի մարտի 4-ի թիվ 843-16 և Չարենցավան համայնքի Արզական գյուղի Ծաղկունյաց փողոցի 25 տան բնակիչ ***Գեղեցիկ Հայկոյի Եղիազարյանի*** 2022 թվականի մարտի 4-ի թիվ 844-16 դիմումները ֆինանսական աջակցություն հատկացնելու մասին և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով՝առաջարկում եմ. Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 200.0 հազ. դրամ հատկացնել ***Կոլյա Ալեքսանդրի Կոնջորյանին,*** Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 200.0 հազ. դրամ հատկացնել ***Գեղեցիկ Հայկոյի Եղիազարյանին:***

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-8 **դեմ - 0** **ձեռնպահ -0**

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

4. Չարենցավան համայնքի ղեկավարի տարեկան հաշվետվությունը 2021 թվականի համայնքի տարեկան աշխատանքային պլանի իրականացման մասին:

/Զեկ. Գ.Աֆյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով և 82.1-րդ հոդվածի 6-րդ մասով.***առաջարկում եմ.***Հաստատել Չարենցավան համայնքի ղեկավարի տարեկան հաշվետվությունը 2021 թվականի համայնքի տարեկան աշխատանքային պլանի իրականացման վերաբերյալ, համաձայն հավելվածի(ներկայացվում է):

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-8 **դեմ-0** **ձեռնպահ-0**

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

5. Վոլոդյա Փինաչյանին և իր ընտանիքի անդամներին սեփականության իրավունքով պատկանող ք.Չարենցավան Այգեստան թաղամաս 1-ին փողոց 4-րդ փակուղի թիվ 7 հասցեում գտնվող ավել զբաղեցրած հողատարածքն ուղղակի վաճառքով օտարելու մասին:

/Զեկ.Բ.Բալբաբյան/

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերի պահանջներով, հիմք ընդունելով Վոլոդյա Փինաչյանի/ լիազ.անձ Սևակ Վարդանյան/ դիմումը.***առաջարկում եմ.*** Առաջին պետական գրանցում կատարելու համար Վոլոդյա, Ավետիք, Կարինե և Ժուլետա Փինաչյաններին պատկանող Չարենցավան քաղաք Այգեստան թաղամաս 1-ին փողոց 4-րդ փակուղի թիվ 7 հասցեում գտնվող, 559.9 քմ քմ մակերեսով հողատարածքի 80 քմ նկատմամբ ճանաչել նրանց սեփականության իրավունքը և թույլատրել ուղղակի վաճառքի եղանակով՝ կադաստրային արժեքի 30% արժեքով օտարելու 79.9 քմ մակերեսով հողատարածքը :

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-8 դեմ-0 ձեռնպահ-0

Բաբայան Վալերի

Գասպարյան Անատոլի

Երիցյան Գագիկ

Եփրեմյան Տարոն

Խլղաթյան Արսեն

Վարդանյան Նորայր

Վարդանյան Սարգիս

Պողոսյան Մնացական

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Նիստն արձանագրեց Ս.Մուրադյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ